



ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐԵԿՆԵՐԻ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ (CARE FOR NEWCOMER CHILDREN – CNC) ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Բարի գալուստ! Մեր CNC ծրագիրը կոչված է օգնելու նոր Կանադա ժամանած երեխաներին և իրենց ընտանիքներին իրենց IRCC ծրագրին մասնակցելու ընթացքում: Մեր նպատակն է՝ օգնել Ձեզ:

Մենք գիտենք, որ սա զգալի փոփոխությունների շրջան է Ձեր և Ձեր ընտանիքի համար: Մեր նպատակն է, որ Ձեր երեխային զգա իրեն Կանադայում հյուրընկալված, ապահով և անվտանգ, երբ իր ընտանիքը փորձում է հաստատվել այստեղ՝ միաժամանակ մեր օգնությամբ զարգանալով և ձեռք բերելով ինքնավստահություն:

ԾՆՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՄՇՏԱՊԵՍ ԼԻՆԵՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ԵՐԵՄԱՅԻ CNC ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Ձեր երեխայի անվտանգությունը ամենակարևորն է

Վստահեցնում ենք Ձեզ, որ մեր անձնակազմը բաղկացած է փորձառու և բարձր որակավորում ունեցող մասնագետներից:

- Ողջ անձնակազմը ունի առաջին օգնության դասընթացների վկայական և անցել է կենսագրական տվյալների և չղատվածության ստուգում:
- Մեր ծրագիրը համապատասխանում է CNC-ի պահանջներին և մեզ հսկում են առողջապահության և անվտանգության չափանիշներին համապատասխանելու համար:
- Մենք ունենք պահվածքի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր երեխաների նկատմամբ հարգանքով և առանց խտրականության վերաբերմունք: Անձնակազմը պետք է միշտ դրական պահվածք ցուցաբերի: Չի թույլատրվում երեխաների հետ կոպիտ խոսելն ու ֆիզիկապես պատժելը, ինչպես նաև անտեսումը կամ առանց հսկողության թողնելը:
- Անձնակազմը պարտավոր է և իրավապես պատասխանատու տեղեկացնել համապատասխան մարմիններին այն իրավիճակներին մասին, երբ երեխան անտեսվել է կամ նրան վնաս է հասցվել:

Եթե հետաքրքրված եք, ապա կարող եք պահանջել մեր պահվածքի կառավարման քաղաքականության կամ երեխայի նկատմամբ բռնության կիրառման կամ կասկածի քաղաքականության փաստաթղթերի պատճենները:

Ի՞նչ կարող եք ակնկալել CNC-ից

Մեր աշխատանքը երեխաների խմբային խնամքի հարցում կարող է տարբերվել Ձեր սովորականից: Եթե ունեք կարգապահության, ուտելիքի, լեզվի, կրթության կամ առօրյայի հետ կապված հարցեր, դիմեք մեզ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխաները սովորում են խաղի միջոցով: Այդ իսկ պատճառով մեր անձնակազմը մշակել է կրթական, խաղային ուսուցողական վարժություններ, որոնք համապատասխանեցված են երեխաների հետաքրքրություններին, տարիքին, ունակություններին և մշակույթին: Ձեր երեխան կփորձի շփվել մյուս երեխաների հետ և դա կզարգացնի նրա մտտ հմտություններ, որոնք կնախապատրաստեն նրան դպրոցի համար:

Ինչպե՞ս Դուք կարող եք օգնել Ձեր երեխային աղապատացվել CNC ծրագրում

Եթե Ձեր երեխան ունի վախեր կապված CNC ծրագրին մասնակցելու հետ՝ դա նորմալ է: Անձնակազմը Ձեզ հետ աշխատանք կտանի, որպեսզի ծրագրին մասնակցելը ավելի դյուրին լինի: Սկզբում, Ձեր երեխան կարող է լաց լինել, ամուր գրկել Ձեզ կամ այլ կերպ իրեն պահել: Որոշ գաղափարներ այս հարցի վերաբերյալ կարող եք գտնել մեր *“Բարի գալուստ CNC. Աստիճանական բաժանման ուղեգիծ ծնողների համար”* փաստաթղթում:

Տեղեկության փոխանակումը ծնողի և անձնակազմի միջև կարևոր է

Մենք խրախուսում ենք ավելի լավ ճանաչել մեր անձնակազմին և հայտնել նրանց տեղեկություններ Ձեր երեխայի մասին: Միասին աշխատելով մենք ավելի լավ կարող ենք օգնել Ձեր երեխային և ապահովել նրա անվտանգությունը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐԵԿՆԵՐԻ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԻՆԱՄՔ (CARE FOR NEWCOMER CHILDREN - CNC) ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Անպայման տեղեկացրեք անձնակազմին հետևյալի մասին՝

- ավերգիա կամ սննդային յուրահատկություններ
- հիվանդություն կամ դեղամիջոց, որ Ձեր երեխան ընդունում է (տեղեկացնում ենք, որ դեղը տրվում է երեխային միայն կյանքին վտանգ սպառնալու դեպքում, և չպետք է գտնվի երեխայի մոտ կամ նրա պայուսակի մեջ)
- որևէ այլ կարիքներ կամ բարդություններ: Նրանք պետք է կարողանան օգնել:

Նաև կօգնի անձնակազմի տեղեկացնել՝

- Ձեր երեխայի քնելու կամ սնվելու ժամերը
- Ձեր երեխայի հետաքրքրություններն ու սիրած կերակուրը
- խոսքեր, որոնք կօգնեն անձնակազմին շփվել Ձեր երեխայի հետ
- տեղեկություններ Ձեր ընտանիքի կամ քույր/եղբայրների մասին (կամ բերեք մեկ ընտանեկան նկար):
- և ինչպես եք Դուք հոգ տանում Ձեր երեխայի մասին և ինչ կցանկանայի ՆԵՄ-ի անձնակազմը աներ:

Այլ կարևոր տեղեկություններ՝

- Ձեր երեխայի անվտանգության համար, միայն մեզ մոտ գրանցված ծնողը կարող է բերել և վերցնել երեխային մեր կենտրոնից:
- Միշտ պետք է գրանցեք երեխային բերելուց և տանելուց:
- Երեխային եղանակին և մեր խաղերին համապատասխանող հագուստ հագրեք: Եթե ունեք հարցեր երեխային որևէ հագուստ հագցնելու մասին, դիմեք մեր անձնակազմին:
- Կարևոր է միշտ բերել երեխային ռեժիմը պահպանելու համար և նրան դպրոցին պատրաստելու համար: Երեխայի բացակայության դեպքում տեղեկացրեք անձնակազմին:
- Եթե երեխան հիվանդ է, մի բերեք նրան, որպեսզի նա չվարակի մյուսներին: Եթե երեխան ջերմում է կամ ունի փորլուծություն, պետք է 24 ժամ լինի ասիմպտոմատիկ՝ կենտրոն վերադառնալու համար:

Ամեն ինչ մեր CNC ծրագրի մասին

Մանկավարժի անուն: _____
Caregiver's Name / Nom du dispensateur de soins

ՆԵՄ-ի ժամերը: _____
CNC Hours / Heures de garde d'enfant

	Այո Yes / Oui	Ոչ Non / Non
Պատվաստումը պահանջվում է <small>Immunization required / L'enfant doit avoir été vacciné</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Մենք տրամադրում ենք խորտիկներ <small>We provide snacks / Nous fournissons des collations</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Ընդմիջման ուտելիքը ապահովում եք Դուք <small>Bring food for your child's lunch/snack / Apportez le déjeuner/la collation de votre enfant</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Ընդմիջման ընթացքում Դուք եք խնամելու Ձեր երեխային <small>You care for your child at lunch / Vous prenez soin de votre enfant au déjeuner</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Մենք ունենք քնի ժամ <small>We have a naptime / Notre programme prévoit une sieste</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>

	Այո Yes / Oui	Ոչ Non / Non
Բերեք Ձեզ հետ հանգստացնող խաղալիք <small>Bring a comfort toy / Apportez un jouet réconfortant</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Բերեք Ձեզ հետ ավելորդ հագուստ <small>Bring extra clothes / Apportez des vêtements supplémentaires</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Բերեք Ձեզ հետ ներսի կոշիկներ <small>Bring indoor shoes / Apporter des chaussures d'intérieur</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Բերեք Ձեզ հետ ծածկոց (եթե կա անհրաժեշտություն) <small>Bring a blanket (if needed) / Apportez une couverture (si nécessaire)</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>
Բերեք Ձեզ հետ տակդիրներ (եթե կա անհրաժեշտություն) <small>Bring diapers (if needed) / Apportez des couches (si nécessaire)</small>	<input type="radio"/>	<input type="radio"/>



Սատարում ենք երիտասարդ ներգաղթյալների երեխաների խնամքին և աղապատացիային

Հավելյալ տեղեկությունների համար ծնողները կարող են այցելել կայքը: www.cmascanada.ca



Care for Newcomer Children